

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԲԱԳԱՐԱՆՈՒՄՆԵՐ

ՎԱՆԵՐԻ ԲՐՅՈՒՍՈՎԻ ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Քրյուսովը և Տերյանը եղել են բարեկամներ: Ռուս բանաստեղծը խորապես նախել է Քուլմանյանին, որպես մեծ արվեստագետի, ըստ արժանվույն բարձր գնահատել նրա ստեղծագործությունը, սակայն հայ պոետներից ամենից շատ նա սիրել է Հովհաննիսյանին: «Մեզ բնավում է,—արդարացիորեն նկատել է Արսեն Տերտերյանը,—որ Քրյուսովը հայ բոլոր բանաստեղծների մեջ ամենից շատ իրեն ՀԱՐԱՋԱՏ է ԶԳԱՑՆԸ Հովհաննիսյանի հետ: Հարազատ է զգացել Հովհաննիսյանի ծանրային ստեղծագործությանը, պատմական հերոսիկային, տաղաշափական վարպետությանը և չեզվական օրինակելի կուլտուրային»:

Հովհաննիսյանը ոչ միայն որպես բանաստեղծ, այլև որպես անձնավորություն, որպես բաղաժանգի, հայ գրականության ամենապայծառ ղեմներից մեկն է: Ովքեր բախտ են ունեցել մոտիկից նանաչել նրան, խոսում են Հովհաննիսյանի մասին առանձնահատուկ շեղմությամբ: Այդ շեղմությունը տարբեր աստիճանի բնորոշ է և Ավ. Խալատկյանի, և Պավլո Տիշինայի, և Արա. Կարինյանի, և Ստ. Զորյանի հիշողությունների՝ Հովհաննիսյանին նվիրված էջերին, որը հայ բանաստեղծի անձնավորության, նրա բարի բնավորության, նրա մաքուր սրտի մեղմության և ինքնության ինքնօրինակ արտացոլումն է: Այդ շեղմությունը զգացվում է նաև Քրյուսովի նամակներում:

Նրան Բանաստեղծների ծանոթությունը վերաբերում է 1916 թ. սկզբներին, եւր Քրյուսովը մեծ եռանդով ու խանդավառությամբ զբաղված է «Հայաստանի պոեզիա» ժողովածուի աշխատանքներով: 1916 թ. հունվարի 18-ին Քրյուսովը, որտեղ այդ տարիներին պաշտոնավարում էր Հովհաննիսյանը, Քրյուսովը դասախոսություն կարդաց հայ պոեզիայի մասին: Ռուս անվանի բանաստեղծի պատվով երեկոյին Քրյուսովը գրասենյակում հասարակության անունից ողջույնի խոսք ասաց Հովհաննիսյանը: Այդ օրերին էր, երբ երկու բանաստեղծները ծանոթացան միմյանց հետ: Նրանք շտեղծեց այդ ծանոթությունը: Քրյուսովը շուտով մեկնեց Խուսաստան: Սակայն այդ միակ հանգիստը բավական էր, որ նրանք իրենց զգայուն հոգով նանաչեին միմյանց, դառնային մտերիմ բարեկամներ, բանային իրենց սիրտը միմյանց առջև: Այդ մասին է վկայում երկու անվանի բանաստեղծների թեև կարճատև, բայց բովանդակալից նամակագրությունը:

Քրյուսովի նամակները հայերեն լույս են տեսնում առաջին անգամ, իսկ Հովհաննիսյանի նամակները ճշտված են, որի հետևանքով ուղղվել են բարձրագույն մեջ տեղ գտած սխալները, բաց թողումներն և կրճատումները լրացվել:

ԿԱՄՍԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ապրիլ, 1916

I

Սիրելի Հովհաննիսյան.

Ամաչում եմ, շատ եմ ամաչում, որ մինչ հիմա չեմ գրել Ձեզ: Ծիշտ է, ես հիվանդ էի, գրեթե բոլոր այս ամիսներին, սակայն դա ոչ մի արդարացում չէ: Ավելի «մեղմացնում է իմ մեղքը» այն, որ ամբողջ այս ժամանակվա ընթացքում ես զբաղված էի, այնքան որքան թույլ էր տալիս առողջությունս, մեր ժողովածուով: Այս բոլոր օրերին ես գտնվում էի հայ պոեզիայի հետաքրքրության շրջանակներում՝ թարգմանում էի բանաստեղծություններ հայերենից, ուղղում էի թարգմանություններ հայերենից, գրում էի հայ պոեզիայի պատմության մասին, սրբագրում Հայաստանին նվիրված գրքերը (ընդհանուր հաշվով—երեք): Հետևապես հոգով ես միշտ Ձեզ հետ էի, բազմիցս անգամ ուշադիր կարդում էի Ձեր պոեմները, շատ անգամ գրում Ձեր անունը, խորհում Ձեր և Ձեր պոեզիայի մասին: Այս բոլորը, գուցե արժի նամակին, որը ես չգրեցի: Բայց համենայն դեպս, հավատացե՛ք, որ և՛ ես, և՛ Իոհաննա Մատվեենան՝ մի քանի անգամ գրել ենք այդ նամակը մտքով ու զրույցներում և, եթե այն չի «մարմնավորվել» թղթի վրա, ապա դա ավելի շուտ չափից դուրս մեծ ցանկության և ոչ թե ցանկություն չլինելու պատճառով:

Այժմ հիշում եմ մեր անցկացրած օրերը Բաքվում, ինչպես սքանչելի մի տեսիլ: Անգամ մեզ՝ բանաստեղծներին հաճախ չէ, որ վիճակվում է կյանքում լինել պոեզիային այդքան նվիրված մարդկանց շրջանում, ինչպես եղավ կրակապաշտների քաղաքում: Եվ ավելի հազվագեղ է պատահել իսկական բանաստեղծի հանդիպելու երջանկությունը, ինչպես վիճակվեց մեզ հանդիպել իրար: Գիտեմ, որ այն օրերին ես բախտ ունեցա տեսնել Ձեր լավագույն պատկերը, բայց չէ՞ որ հենց այդպիսին եք Դուք, և այդպիսին էլ հիշում եմ Ձեզ և միշտ պիտի հիշեմ ու համարեմ: Թողնենք մեր առօրյա դեմքը ուրիշներին և մեր շրջանում, բանաստեղծների շրջանում՝ լինենք բանաստեղծներ—սքանչելի անուն, որը մեր ժամանակներում, նավթի աշտարակների ու հիդրոպլանների դարում նշանակում է նույնը, ինչ որ գաղաններին ու ժալոբրը կախարդող Օրֆեյի դարում: Ես միշտ հավատացել եմ Պուշկինի տողերին՝

Դեռ հնուց քաղցր դաշինքը

Միացնում է բանաստեղծներին...²

Բանաստեղծները դեռ հնուց (և այդպես կլինի առհավետ, մինչև Բարատինսկու պատկերած «Վերջին պոետը») կազմում են «գաղտնի ընկերություն», «քաղցր դաշինք» այս աշխարհում: «Ենթադրում եմ Օվիդիոսի ստվերով», ինչպես ասում էր Պուշկինը³, ես Ձեզ այնքան մոտիկ զգացի, որ միանգամից, իհար-

1 Բրյուսովի կինն է:

2 Պուշկինի «Յագիկովին» բանաստեղծությունից:

3 Նույն տեղից:

կե, առանց որևէ «իրավունքի», Ձեզ հետ վաղեմի բարեկամությամբ կապված համարեցի ինձ:

Ահա թե ինչու վստահեցի գրել Ձեզ այս մի քանի փոքր ինչ անկապ տողերը: Եվ գուցե հենց այդ պատճառով էլ ինձ թույլ տվեցի այդքան երկար ժամանակ չգրել Ձեզ՝ բարեկամությունը կների այդ, բարեկամաբար կարելի է կատարել այն, ինչ պաշտոնապես անթույլատրելի կարող էր լինել: Եվ ես հուսով եմ, որ Դուք կպատասխանեք ինձ նույնպիսի բարեկամական ներումով:

Նամակագրությունը, գիտեք, դժվար է սկսել: Իսկ եթե առաջին նամակն ուղարկված է, մյուսները իրենք իրենց են ծնունդ առնում: Թույլ տվեք ուրեմն հավատալու, որ այս տողերը սկիզբ կդնեն մեր իսկական նամակներին: Տեղեկությունները Ձեզանից շատ և շատ կուրախացնեն ինձ: Գրեցեք ինձ այն ամենը, ինչ Ձեր գրելու բոլորներին կցանկանայիք ինձ ասել: Այդ խոսքերից ես ամենից ճիշտ կհասկանամ և՛ այն ամենը, ինչ եղել է, և՛ այն ամենը, ինչ դեռ պետք է լինի:

Իոհաննա Մատվենյան բարևում է, հիշում է, խնդրում է ընդունել իր սրտագին ողջությունը: Անկեղծ գրկում եմ Ձեզ:

Միշտ Ձեր Վալերի Բրյուսով

2 մայիսի 1916 թ.

II

Սիրելի Վալերի Յակովլևիչ.

Որքան ուրախացրիք ինձ Ձեր հաճելի նամակով: Ինչպիսի բույր զգացի նրանից, Ձեզ հետ անց կացրած օրերի բույրը: Ձևականորեն այդ օրերը, կարծեմ ձմռանն էին, բայց ինձ համար դրանք մայիսյան օրեր էին: Ձեր նամակով ինձ հնարավորություն տվեցիք նորից վերապրել այն ամենը, ինչ այնքան տարբերվում է իմ այժմյան ապրածից և, ի մեծ դժբախտություն ինձ՝ հետագա ապրելիքից:

Սիրելի Վալերի Յակովլևիչ. եթե գիտենայիք, ինչքան եմ նախանձում նրանց, ում հաջողվել է ապրել և ծառայել իրենց կոչումին: Չէ՞ որ կրթությունս ավարտելու օրից, ահա 28 տարի է, ստիպված եմ օր ու գիշեր մտածել միայն հանապազօր մի կտոր հացի մասին, որը մեր պայմաններում գրական աշխատանքով չես վաստակի: Եվ այդպիսով ակամա ես ստիպված եմ եղել գրականությամբ զբաղվել ընդհատումներով, հազվադեպ ազատ ժամերին, որպես դիվերտանտ:

Ահա թե ինչու ինձ համար առանձնապես թանկ է, կասեմ ուղղակի անկեղծ՝ իսկական երջանկություն է բարեկամական շփումը Ձեզ հետ: Տարակույս չունեմ, որ Դուք ինձ կհասկանաք առանց հետագա բացատրությունների. և համարձակություն ունեմ հավատալու, որ Ձեր նամակը վերջինը չի լինի: Այն գիտակցությունը, որ Դուք ինձ չեք մոռանում, կգունազարդի իմ կյանքի պրոզան, և ես միշտ երջանիկ կլինեմ, կպարծենամ, որ Բրյուսովը իմ բակաման է...

Մեզ մոտ եռուզեռ է՝ վաղվանից սկսվում են քննությունները բոլոր քաղաքային դպրոցներում, բացի դրանից ինձ վրա են դրել նաև գործող բանակ

կանչված ցածր աստիճանավորների ընտանիքների խնամակալության մի ամբողջ նոր բաժինը: Դրանից կարող եք դատել, թե որքան շատ է այժմ իմ աշխատանքը:

Անհամբեր սպասում ենք ժողովածուին: Ես անձամբ հետաքրքրվում եմ, թե այնտեղ որևէ բան կա՞ իմ բանաստեղծություններից Ձեր քաղցմանությամբ⁴:

Անկեղծ գրկում եմ Ձեզ

Միշտ Ձեր՝ Հ. Հովհաննիսյան.

Տ. Ն. Հովհաննիսյանից ստացել եմ Ձեր ուղարկած գրքերը և նկարը, որոնց համար ի սրտե շնորհակալ եմ:

Կպահեմ դրանք, որպես թանկագին հիշատակ Ձեզանից:

2 մայիսի 1916 թ.

ք. Բաքու

III

Սիրելի Վալերի Ֆաֆուլևիչ.

Այսօր ուղիղ մեկ ամիս է, ինչ իմ գլխին եկավ այն մեծագույն դժբախտությունը, որը կարող է վիճակվել միայն հորր: Հոկտեմբերի 8-ից չկա այլևս իմ անդրանիկ որդին, տաղանդավոր պատանի ջութակահար, Մոսկվայի համալսարանի առաջին կուրսի ուսանող: Նա մահացավ թոքերի բորբոքումից, համալսարանի հիվանդանոցում և թաղված է Վազանկովյան գերեզմանատանը: Ես դժբախտ եղա նաև նրանով, որ հնարավորությունից զուրկ եղա վերջին անգամ համբուրելու իմ թանկագին զավակին, ներկա գտնվելու նրա վերջին շունչը փչելիս...

Դուք, սիրելի բարեկամ, Ձեր զգայուն հոգով կհասկանաք, թե ինձ համար որքան ծանր է գրել այդ մասին Ձեզ. սակայն անկարող էի նամակս սկսել որևէ ուրիշ բանից, իսկ գրել պատրաստվում էի վաղուց ի վեր: Շատ և շատ բանի մասին ինձ հարկավոր էր գրել Ձեզ, բայց ներկայումս թվում է ինձ, որ ամեն ինչ արդեն մեռել է իմ մեջ—իմ առջև միայն թանկագին գերեզմանն է, այնտեղ, հեռու Հյուսիսում, Վազանկովյան հայկական գերեզմանատան արևմտյան անկյունում, նույնպես վաղաժամ հանգած ուսանող հայրենակիցների կողքին:

Շուտով 30 տարի կլինի, ինչ հեռացել եմ Մոսկվայից, և այդ ժամանակվանից՝ 1888 թվականից, ինձ չի հաջողվել, թեկուզ կարճատև լինել Մոսկվայում, որը այնքան սիրելի է ինձ համար. չէ՞ որ 11 տարի, կյանքիս լավագույն տարիները ես այնտեղ եմ անց կացրել: Այժմ Մոսկվան ինձ համար դարձավ ավելի թանկ—իմ հոգու մասը, լավագույն մասը, հիմա ընդմիշտ Մոսկվայումն է, և ես ապրում եմ միակ երազով՝ դուրս պրծնել այստեղից դեպ ազատություն, դեպ Մոսկվա, դեպ թանկագին գերեզմանը...

⁴ Բրյուսովի թարգմանությամբ «Հայաստանի պոեզիա» ժողովածուում տպագրվել են Հովհաննիսյանի հետևյալ բանաստեղծությունները—«Վահագնի ծնունդը», «Սարն ի վեր», «Իրտավազդ» և «Քարնան կարկաչուն վտակի ափին»:

Ներեցեք, սիրելի Վալերի Յակովլևիչ, որ այս անգամ չկարողացա ասել այն, ինչ մտադիր էի. ներեցեք, որ զբաղեցրի Ձեզ իմ վշտով:

Համենայն դեպս իմ հաճելի պարտքն եմ համարում շնորհավորել «Հայաստանի պոեզիայի» մեծ հաջողությունը: Գոնե մեզ մոտ այստեղ վերջին տերերը բոլորն այդ մասին են խոսում. և եթե ոչ այսօր, ապա վաղը ոչ մի օրինակ վաճառքում չի մնա: Ստացված էր 300 օրինակ ընդամենը մի հինգ օր առաջ:

Սրտագին ողջունյն հարգելի Բոհաննա Մատվեենային:

Ամուր սեղմում եմ Ձեր ձեռքը.

Ձեզ նվիրված՝ Հ. Հովհաննիսյան.

8 նոյեմբերի 1916 թ.
Բաքու

20 նոյեմբերի 1916 թ.

IV

Սիրելի Հովհաննիսյան.

Ես շատ կուզենայի Ձեզ այնպիսի խոսքեր ասել, որոնք կարողանային թեկուզ որոշ չափով մխիթարել Ձեր սիրտը Ձեր ապրումների այս ծանր օրերին. սակայն մարդկային լեզվում չկան նման բառեր, բացի կրոնի խոսքերից, որոնք ես չէ, որ պետք է ասեմ... ինչպես ամեն ոք, «ով ապրել է և զգացել»⁵, ես գիտեմ, թե ինչ է մոտիկին կորցնելը (թեկուզ և ոչ որդուն), ես Ձեզ,—հավատացեք ինձ,—հասկանում եմ, ահա և այն ամենը, ինչ իրավունք ունեմ գրելու Ձգիտեմ Ձեր հայացքը մահվան նկատմամբ: Ինձ համար, ինչպես ասել եմ իմ մի ոտանավորում՝

Այն հավատ չէ կայուն հաստատ և ոչ էլ հույս,

Ոչ էլ սեր է երազներով անրջային,

Այլ համոզմունք, որ երբ անցնի կյանքն այս անույս,

Այն լավ կյանքում կհանդիպենք իրար կրկին:

Այստեղ երկար ու անտեղի կլինեն պարզել, թե ինչպես հասա այդ համոզմունքին, սակայն, կրկնում եմ, ես գիտեմ, այնքան, որքան մարդը կարող է «գիտենալ», որքան գոյություն ունի գիտական ճշմարտությունը,—գիտեմ, որ անջատումն այստեղ ընմիշտ չէ: Եթե ես կարողանայի տալ Ձեզ իմ «գիտելիքը», կշտապեի անել այդ ուրախությամբ, բայց դա հնարավոր չէ անել հազարավոր վերստ հեռավորության վրա: Մնում է ինձ միայն հիշեցնել իմ և Ձեր ևս մեկ հայրենիքի՝ պոեզիայի մասին: Ինձ համար չեն եղել մահու չափ ծանր այնպիսի օրեր, երբ «բաղցր հնչյունների ու աղոթքների»⁶ կախարդական հմայքը չտար ինչ-որ անուշ-հիվանդագին մխիթարանք: «Մեկ-

⁵ Ոչ ճիշտ ցիտատ Պուշկինի «Եվգենի Օնեգինից»:

⁶ Պուշկինի «Պոետը և ամբոխը» բանաստեղծությունից:

մեկ նորից հարմոնիայով կարբեմ», — ասել է մեր Պուշկինը⁷, և ինչ վերաբերում է ինձ, ապա ես միշտ փնտրել եմ միայն մի բան՝ այդ «հարմոնիան», կարդալ բանաստեղծություններ, դրել բանաստեղծություններ, եթե չափազանց դժան է եղել կյանքը: Դա ակամա, անհաղթորեն վերադարձնում էր իմ հոգուն գիտակցությունը այն բարձրագույնի, որտեղ հաշտվում է ամեն ինչ, նույնիսկ Մահը... բայց ես նորից ու նորից զգում եմ իմ ասած խոսքերի անզորությունը, «արտահայտված մտքի», որը արդեն դարձել է «սուտ» իմ նամակում⁸, թեև կար և մնում է «ճշմարտություն» իմ գիտակցության մեջ...

Դժվարանում եմ այսօր գրել մյուս ամեն ինչի մասին: Շնորհակալ եմ բարի խոսքերի համար «Հայաստանի պոեզիա» մեր ժողովածուի մասին: Շատ բան այնտեղ այնպես լավ չէ, ինչպես ցանկալի կլինեք, շատ բան թերի է, որոշ բաներ էլ ճիշտ չեն, բայց մարդկային ուժերը սահմանափակ են: Մաքուր խղճով կարող եմ ասել, որ արեցի այն ամենը, ինչ կարողացա: Հետագայում կաշխատեմ անել ավելի լավ և ավելի արժանի Ձեր չքնաղ հայրենիքին, որի հետ ավելի ու ավելի սերտորեն եմ մտերմանում, որովհետև շարունակում եմ զբաղվել հայոց պատմությամբ (պատրաստում եմ հատուկ գիրք, որն արդեն սկսել եմ տպագրել): Հուսով եմ համեմատաբար շուտ տեսնվել Ձեզ հետ, քանի որ հունվարին հրավիրված եմ, այդ մասին, հավանաբար Դուք լսել եք, նորից մի քանի դասախոսություններ կարդալու Բաքվում: Այսպես ուրեմն, մինչ մոտալուտ հանդիպում: Շատ և շատ ուրախ կլինեմ նորից սեղմել Ձեր ձեռքը: /

Սրտանց Ձեր՝

Վալերի Բրյուսով.

ПЕРЕПИСКА В. Я. БРЮСОВА С ОВАНЕСОМ ОВАНИСЯНОМ

Р е з ю м е

У В. Я. Брюсова в период работы над анталогией «Поэзия Армении» установились близкие отношения с рядом армянских писателей и ученых. Однако, как было указано академиком Арсеном Тертеряном, русский поэт был особенно дружески расположен к О. Ованисяну. Публикуемые ниже письма относятся к 1916 году. Вступительная заметка, примечания и подготовка текста К. Н. Григорьяна.

⁷ Պուշկինի «էլեգիա» բանաստեղծությունից:

⁸ Տյառչի «Silentium» (սկոթություն) բանաստեղծությունից: